

միջները պարզ ցուցակէ մը գաս ուէէ պատմութիւն չուէին հայկական հին վանքերու եւ եկեղեցիներու վրայ, լուռ կը մնային ի մասին արանց եւ կանանց ա՛յն հայ մեծասաններու՝ որոնք զարդը կը կազմէին բիւզանդական երուսաղէմի զանազան քաղերուն ու կը պահէին մեր հայրենի երկրին «Հայ իշխաններու» փառքը ու հաւատքը: Ակնարկ մը հայ Անաստասին Յուցակին վրայ կը համոզէր մեզի թէ նոյն եօթանասուն վանքերէն շատերը այսօր անյայտ էին ու քաղուած կամ անհանաչելի դարձած աւերակներու, եւ կամ արշաւաններու յառաջ բերած փլուզումներէն եւ քանդումներէն վերջ կառուցուած օտար շէնքերուն գեթիներու տակ: Բայց չէի յուսահատած այս ժամուր վիճակէն ու կ'ուզէի գոնէ գրել պատմութիւնը այն հայ վանքերուն որոնք կը յիշուէին մեզի ծանօթ աւերակներով, մզկիթի փոխուած կամ բռնագրաւուած վանքերով ու եկեղեցիներով, մոզայիներու եւ արձանագրութեանց ու ձեռագրաց յիշատակարաններուն մէջ եւ կը յուսայի թէ անոնցմով ծանօթ վանքերու պատմութիւնը գրելով ցոյ՛ մը կամ հաշակ մը պիտի կրնայի տալ իմ սիրելի մերազնէից. 5-6 տարիներ այս գործին լծուեցանք եւ Սիւնի հրատարակութիւնն ալ մեզի խթան մը եղաւ աւելի խորացնելու մեր պրպտումները, ընթերցումները եւ ի հարկին համբողջելով ձեռք բերելու պատմական աւաղաններ մեր ձեռնարկած այս վանօրէից պատմութեան: Մեր վերեւ յիշած աղբիւրներէն գաս այս աշխատութեանս համար իբր աղբիւր օգտուած եմ վաղեմի օտար ուխտաւորներու Ուղեգրութիւններէն, թէեւ անոնք կամաւորապէս ժխտ մեր վանքերու վերաբերեալ պատմական տեղեկութիւններու մասին, բայց երբեմն անգիտակցաբար տեղեկութիւններ սպրդեցուցած են իրենց գրուածներուն մէջ եւ այդպիսով կարելի եղած է օգտուիլ անոնցմէ ալ:

Օգտուած եմ ընդհանրապէս Ս. Տեղեաց վրայ այլ եւ այլ լեզուներով հրատարակուած կարեւոր գործերէն՝ որոնք կը խօսին Ս. երկրի վանքերու ու եկեղեցիներու եւ անոնց տեղագրութեան եւ հնախօսութեան վրայ. մասնաւորապէս զանց ըրած չեմք, բացի տեղագրականէն, պատմական եւ նկարագրական տեղեկութիւններ տալու ի մասին Խաչակրաց այն եկեղեցիներուն որոնք կը զտնուին մեր նկարագրած իւրաքանչիւր հայկական վանքի կամ եկեղեցիի զտնուած տեղւոյն մէջ, գաղափար մը տալու համար նոյն միջաւայրի տարբեր եկեղեցիներու շինութեանց ու պատմութեան նկատ-